գականներին և նրանց ներկայությամբ կորկոտը ածում երեխայի գլխին՝ նստեցնելով նրան իրենց մեջ հատակին և գլուխը սփոռցով ծածկելով։ Երեխայի առջև դնում էին սանր կամ հայելի և դանակ։ Եթե նա ձեռքը պարզեց դեպի սանրը կամ հայելին, դա գուշակում էր, որ հաջորդ ծնվողը քույր է լինելու, իսկ եթե դեպի դանակը՝ եղբայր[80]։ Այս կորկոտը Արծվանիկում կոչվում էր կեէխաշ[81], ինչպես և Վարանդայում, իսկ ուրիշ գյուղերում՝ կէղճահատիկ[82]։ Երեխան ագահությամբ հատիկներն ու քաղցրեղենը բերանն էր լցնում։ Ներկա եղողները նրան օգնում էին, որ ապագայում երեխայի ատամները նույն արագությամբ գործեն և միշտ առատ հաց և քաղցրեղեն վայելեն։ Այս սովորությունը տարածված էր ոչ միայն հարևան Վարանդայում և Գանձակի շրջանում, այլև գրեթե բոլոր հայաբնակ գավառներում։ Վանում դա պարզապես կոչվում էր խատիկ՝ հատիկ։

Երեխային քայլել վարժեցնելու համար կանգնեցնում էին նրան երեքանիվանի հենարանի՝ ճրորոանի[83] մոտ։ Նա ճրորոանը բռթելով առաջ էր գնում, հենվելով նրան։

Դժվար և ուշ ոտքի ելնող երեխային տանում էին Ծիծեռնավանք, Ագռավի քարի առաջ ոտներին ջուր էին ածում, կամ Բեխ գյուղի մոտ եղած Աստվածածնի եկեղեցին և դռան գլխի ծակով երեք անգամ անցկացնում, միշտ միևնույն կողմից։ Ոտքի ծանրությունը լվացվում էր կամ վրայից սրբվում՝ քերվում, քանի որ ոտք ելնելու ուշանալը բացատրում էին իբր թե ուրեմն մոր կաթը ծանր է եղել և այդ ծանրությունը անցել է երեխային։

Ման գալ սկսող երեխային կամ երկու ձեռքերից ման էին ածում կամ երեխայի ձեռքը տալիս էին փայտի մի ծայրը, իսկ մյուս ծայրը իրենք էին բռնում զգուշությամբ և քաշելով, երեխային քայլել դրդում։

Մայրն աշխատում էր երեխային երկար կերակրել իր ծծով, երբեմն մինչև երեք տարի, ի միջի այլոց այն համոզմունքով, որ դա նպաստում է ուշ հղիանալուն։

ՄԱՀ ԵՎ ԹԱՂՈՒՄ

Ամեն մի ծնունդ ավելացնում է ընտանիքի կազմը, ամեն մի մահ պակասեցնում է այդ կազմը։ Թե՛ ծնունդը և թե՛ մահը շոշափում են ոչ միայն ընտանիքի, այլև ամբողջ տոհմի և համայնքի շահերը։ Տոհմն ու համայնքը արձագանքում էին ընտանիքի անդամների թվի թե՛ աճելուն և թե՛ կրճատվելուն։ Թաղման հանդեսների մեջ էլ որպես հարսանեկան և տղաբերքի սովորություններ մեջ մինչև վերջերս պահպանվում էին վաղուց ապրած հասարակարգի շատ բնորոշ մնացորդները։ Հին զանգեզուրցու հասկացողությամբ՝ մարդու ճակատին գրված է նրա մահվան օրը։ Ոչ մի հանգամանք, ոչ մի միջոց չի կարող փոխել ճակատագրով նշանակված ժամը։ Այս համոզմունքով զանգեզուրցին հանգիստ դիմավորում էր մահվանը, մյուս կողմից շրջապատողներն

---

80 СМОМПК, вып. XXV, отд. II, էջ 44։ Գորիսում աղջկա գլխին սանր էին դնում, տղայի գլխին՝ դանակ կամ չախմախ։

81 Կէճ՝ եփած ցորեն, կէղճ։

82 Շատ տեղերում կոչվում էր ակռահատիկ՝ ատամի հատիկ։

83 Ճրորոան են կոչվում նաև այն փայտե ձեռքի խաղալիքները, որոնցով երեխաները Մեծ պասի վերջին շաբաթվա հինգշաբթվա Սգի գիշերը եկեղեցում ճրոռոց են բարձրացնում։